Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(Ս. Էջմիածին, ապրիլ 20, 2014 թ.)

«Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի Իմ՝
ընդ խաւար մի՛ գնասցէ. այլ ընկալցի զլոյսն կենաց»
(Յովհ. Ը. 12):

Սիրելի՛ հավատավոր զավակներ ի Հայրենիս եւ ի Սփյուռս,

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշազարդ Ս. Հարության տոնը հուսառատությամբ է լուսավորել մեր հոգիները: Մահվանից հարություն է առել մեր Փրկիչը, մահարեր գործիքից խաչը վերափոխվել է կենաց ծառի, մարդն ու տիեզերքը նորոգվել են կյանքի եւ հավերժության շնորհով:

Այսօր Քրիստոսով հարուցյալ նոր արարչություն է, նոր կյանքի ճանապարհ՝ պայծառացած կենարար լույսով, որ պարգեւում է Փրկիչը. «Ես եմ աշխարհի լոյսը. ով Իմ ետեւից է գալիս՝ խաւարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լոյսը»: Հարուցյալ մեր Տիրոջ այս խոսքերը հավիտենական ու նաեւ երկրային լուսավոր կյանք ունենալու ապրվածային հրավեր են՝ ուղղված յուրաքանչյուր մարդու, քանզի Ս. Հարության շնորհները բաշխվում են բոլորին, նաեւ նրանց, ովքեր դեռեւս կանգնած չեն հավատքի ճանապարհին, ովքեր կյանքի փորձություններից սրտաբեկ՝ ընդվզում են Ստեղծող դեմ: Ս. Հարության շնորհները սփռվում են նաեւ այնտեղ, որտեղ պատերազմների եւ մոլեգնող ահաբեկչությունների մեջ դառնացած են մարդիկ, կարծրացած են սրտերը, որտեղ մարդիկ կրում են տառապանքների դաժան բեռը, որտեղ զոհվում են հրեշտականման մանուկներ՝ աղքատության, անտարբերության, ռազմական գործողությունների հետեւանքով: Մարդկության կյանքն ալեկոծող բոլոր հակամարտությունների, հումանիտար, բնապահպանական աղետների, տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի, բոլոր հոգսերի ու մարտահրավերների վրա այսօր փայլում է Քրիստոսի Հարության խավարացիր լույսը: Հարության հավատքը, որ վերափոխել է պատմության ընթացքը, կրթել է հոգի ու միտք, կերտել մշակույթ, զարգացման առաջնորդել պետություններ, առաջադրել արդարության եւ իրավունքի համամարդկային չափանիշներ, մարդասիրական արժեքներ ու սկզբունքներ, այսօր էլ հրաշագործ զորությունն է, որին պիտի ապավինենք, որով պիտի նորոգվեն աշխարհն ու մարդկային հոգիները՝ նոր իրագործումներով, խաղաղությամբ, սիրով, բարիքով պայծառակերպելու մարդկության կյանքը: Այսօր չկան հասա-

ռակություններ, պետություններ առանց խնդիրների, կարիքների ու նեղությունների: Հասարակություններն ու պետությունները, սակայն, չեն կարող ունենալ առաջընթաց, անգամ դատապարտված են ոչնչացման, եթե չլինեն հոգեւորբարոյական արժեքների վրա կյանքի հաստատման, առաջընթացի ու կատարելության առաջնորդող տեսիլքն ու նպատակները եւ դրանց նվիրյալ առաքյալները: Արդարեւ, մարդկության մեծ նվաճումները խիզախումներն են ազնիվ տեսլական ունեցող անհատների, ինչպես քրիստոնեության լույսի տարածողները եղան Քրիստոսի աշակերտները, ովքեր առ Աստված հզոր հավատքով, անձնազոհ հանձնառությամբ սկզբնավորեցին հարուցյալ կյանքի ուղիներն աշխարհում՝ ի սեր մարդու փրկության, երջանկության ու բարօրության: Ամեն ոք, ով հավատում է Աստծուն, ով սեր ունի արարչության ու մարդկանց հանդեպ, առաքյալ է եւ պիտի իրագործի իր առաքելությունն աներկբա գիտակցությամբ, որ Աստծո օրհնությունն է շնորհաց աղբյուրը, որը հեռացնում է կյանքի մռայլը, Աստծո գորակցությունը բազմապատկում է աշխատանքի արդյունքները, Աստծո մխիթարությունը փարատում է հուսահատությունն ու տխրությունը, Աստծո երկնային արդարությունն ամրապնդում է հիմքերը երկրային արդարության: Այս գիտակցության, այս ոգու հառնումով պիտի ամոքվեն ներկա աշխարհի վերքերը, սիրո եւ համերաշխության ուղիներում հաստատվի երկրների ու հասարակությունների ընթացքը, կյանքը վերափոխվի հարության լույսով, որ պատգամն է մեր Տիրոջ եւ խորհուրդը՝ Քրիստոսի Հարության:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Փրկչի Հարության ավետիսն այսօր հրավեր է աշխարհասփյուռ մեր ժողովրդին հայրենական եւ ազգային մեր կյանքի դժվարությունների առջեւ չընկրկելու, այլ աներեր կամքով ջանքեր գործադրելու հայրենի մեր երկրի, մեր ժողովրդի բարօր ու լուսավոր գալիքի համար: Ժամանակի հողմերի մեջ որտե՞ղ պիտի մնար մեր ժողովուրդը, եթե չզորանար Քրիստոսի Հարության շնորհներով, եթե չունենար Հայրենիքի, ազգի հանդեպ սերը եւ չկարողանար այն հենարան դարձնել նեղության ժամին եւ ուժ՝ ապրելու, ստեղծելու եւ վեր հառնելու: Մեր առջեւ ծառացած խնդիրներն ու մարտահրավերները կարող ենք վճռել կյանքը վերափոխելու անվարան ձգտումով, քրիստոնեական մեր արժեքներին հավատարմությամբ, ազնիվ, բարի ընթացքով, մեր հանձնառություններով, հայրենանվեր, ազգաշահ գործերով: Ս. Հարության տոնը մեզ բերում է քաջալերությունը հուսավառ ոգով կյանքի կոչելու այն ծրագրերը, որ յուրաքանչյուրը, Տիրոջը հետեւելու կոչին արձագանքելով, կարող է իրագործել ընտանեկան, հասարակական, պետական եւ ազգային մեր կյանքի համար՝ անձնական շահը չտարբերելով երկրի ու ժողովրդի շահից: Մեր կոչման եւ պատասխանատվության մեջ հոգով ու նվիրումով ծառայենք, ձգտենք հաջողությունների ոչ միայն մեզ համար, այլեւ՝ միմյանց, հայրենական եւ ազգային մեր կյանքի առաջընթացի համար եւ, ինչպես պատվիրում է մեր Տերը, համարենք, որ արեցինք ընդամենը այն, ինչ պարտավոր էինք (Ղուկ. ԺԷ. 10):

Հայրական Մեր խոսքն ենք ուղղում հատկապես երիտասարդ Մեր զավակներին ի Հայրենիս եւ ի Սփյուռս՝ հորդորելով լինել տերունապատվեր առաքելության կրողներ՝ երիտասարդության հրաշալի ներուժը հույսով ու հավատքով միախառնելով ազգային կյանքին: Մեր կյանքի դժվարությունների ու հրամայականների, մեր ժամանակների եսակենտրոն ու հոգեկործան անցողիկ ընթացքների եւ երեւույթների, փորձության բոլոր հողմերի դիմաց ամուր պահեք երիտասարդական կենսահաստատ ոգին՝ անսասան կանգնած հավատքի վեմին՝ հիշելով խոսքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի. «Ես եմ աշխարհի լույսը. ով Իմ ետեւից է գալիս, խաւարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը»: Սիրելի՛ երիտասարդ զավակներ Մեր, Դուք, որ անդրանիկ սերունդն եք մեր Հայրենիքի ազատ կյանքի, ձեր սրտերում՝ իբրեւ ամենամեծ գանձ, կրեք ու պահպանեք Քրիստոսով ազատ, Քրիստոսով պայծառ հոգու լույսը: Ժողովուրդը, որ ունի Աստծո օրենքով կրթված որդիներ, ունի նաեւ իրական հույսեր, բարի հեռանկար: Դուք պիտի իրագործեք այդ հույսերը պետական, ազգային եւ եկեղեցական մեր կյանքի անդաստաններում, մեր Հայրենիքի սահմաններում, Սփյուռքում մեր մայրենիի եւ մշակույթի պահպանության դիրքերում, մեր երկիրը հզորացնելու, Արցախի ազատ ապրելու իրավունքը, մեր արդար դատը պաշտպանելու մարտադաշտերում եւ ձեր հոգու նվիրումով, հայրենական եւ ազգային կյանքում ձեր հանձնառություններով պիտի հյուսեք հաղթանակները մեր նորօրյա կյանքի:

Ներկայիս ազգային մեր կյանքի մտահոգություններից է շարունակում մնալ Մերձավոր Արեւելքում, հատկապես Սիրիայում ապրող մեր ժողովրդի զավակների դժվարին կացությունը: Վերջին շրջանում նոր տագնապ են հարուցել Քեսաբում Թուրքիայի աջակցությամբ ծայրահեղական զինյալների ծավալած ռազմական գործողությունները: Հայաբնակ շրջանի ավերումը եւ հայ բնակչության տարհանումը շարունակությունն են հայ ժողովրդի հանդեպ որդեգրած թուրքական նույն ոճրագործ քաղաքականության, որին պիտի կարողանանք դիմակայել պետական, եկեղեցական, ազգային մեր կառույցներով՝ միասնական ջանքերով պաշտպանելով մեր ժողովրդի իրավունքները:

Այսօր, սիրելինե՛ր, երբ Քրիստոսի Հարության տոնի լույսն ու խանդավառությունը վերստին բաբախում են մեր սրտերում, առաքելական խոսքի համաձայն՝ հագած լույսի զրահը (Հռ. ԺԳ. 12), իբրեւ Տիրոջ Հարությամբ ցնծացող, տրտմությունը, երկյուղն ու հուսահատությունը մերժող առաքյալներ, ելնենք վերափոխելու մեր եւ մեր հայրենյաց ու ժողովրդի կյանքը նոր իրագործումներով, գալիքի մեր պայծառ տեսիլքը լուսաշող իրականություն դարձնելու հաստատուն քայլերով:

Այս հավատով եւ մաղթանքով, Ս. Հարության ավետիսով ողջույն ենք հղում Առաքելական մեր Ս. Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արք. Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատ-

ռիարք Մեսրոպ արք. Մութաֆյանին եւ մեր Եկեղեցու ողջ հոգեւոր դասին, Քույր եկեղեցիների հոգեւոր պետերին եւ փիրախնամ նրանց հոտին: Տիրոջ պահպանությունն ենք հայցում իրենց եւ հանապազ զորակցությունը՝ փերուռնապատվեր առաքելության մեջ:

Քրիստոսի Հարության շնորհների հայցով Մեր ողջույնն ենք բերում Պատարագի սրբազան արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության նախագահ փիար Սերժ Սարգսյանին եւ առաջին փիկնոջը: Մեր ողջույնն ու բարեմաղթանքներն ենք հղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ փիար Բակո Սահակյանին եւ հայոց պետական ողջ ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին: Ս. Հարության բերկրալի ավետիսով հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում աշխարհասփյուռ Մեր զավակներին:

Զատկական այս սուրբ եւ նվիրական օրն ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Հարության շնորհները զորացնեն ձեզ, սիրելի՛ ժողովուրդ հայոց, ապրելու հույսով ու հավատքով եւ սիրով ու համերաշխությամբ կերտելու մեր կյանքի նոր բարի օրը:

Թող Ամենակալ Իր Ս. Աջի հովանու ներքո խաղաղ պահի աշխարհը համայն, բարօր առաջընթաց շնորհի մեր Հայրենիքին, պայծառություն՝ մեր Ս. Եկեղեցուն եւ հավատավոր ազգիս հայոց՝ այսօր եւ միշտ բարեբանելու Ս. Հարությունը մեր Փրկչի.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց.
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»